

ՎԼԱԴԻՍԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Զոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՍԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈԼԵՐՈՒՄ

Տնտեսական ճգնաժամերը դեռևս պատմության անհիշելի ժամանակներից միշտ ուղեկցել են հասարակության և տնտեսության զարգացմանը: Ըստ Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր պատմաբան Ֆիլիպ Զեյի՝ համաշխարհային պատմության մեջ հայտնի առաջին տնտեսական ճգնաժամը տեղ է գտել դեռևս Հռոմեական կայսրությունում մ.թ. 88 թվականին¹: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ժամանակահատվածում զարգացած արդյունաբերական տնտեսություն և ֆինանսական համակարգեր ձևավորված չեն եղել, մանրամասն չենք անդրադառնա այդ ճգնաժամի առանձնահատկություններին:

Սկսած 18-րդ դարից, երբ արդեն ձևավորվել էին կապիտալիստական տնտեսական հարաբերություններ, տնտեսական ճգնաժամերը օրինաչափ բնույթ սկսեցին կրել: Սկզբնական շրջանում դրանք հանդես եկան որպես գյուղատնտեսական արդյունաբերության թերարտադրության բացասական հետևանքներ, իսկ արդեն 19-րդ դարից՝ արդյունաբերական արտադրության և սպառման միջև հավասարակշռության պարբերաբար կրկնվող խախտումներ:

Ուշագրավ է տնտեսական ճգնաժամը, որը տեղ է գտել 17-րդ դարում (1634-1637թթ) Հոլանդիայում և այն պայմանականորեն կոչվել է «Կակաչների ճգնաժամ»: Սա կապված է այն բանի հետ, որ այդ ժամանակահատվածում մեծ ճանաչում էին վայելում կակաչները և մարդիկ այդ ծաղիկների սերմեր ձեռք բերելու համար, որոնց գինը ըստ նրանց կանխատեսման՝ օրեցօր բարձրանալու էր, պատրաստ էին վաճառել նույնիսկ իրենց ամբողջ ունեցվածքը: Հետագայում, երբ այդ սպասելիքները չարդարացան, հոլանդական ժողովրդի համար ծանր տնտեսական և ֆինանսական իրավիճակ ստեղծվեց:

18-րդ դարակզբին, իսկ ավելի կոնկրետ 1720 թվականին, Ֆրանսիայում առաջացավ ֆինանսական ճգնաժամ՝ այդ ժամանակաշրջանի Ֆրանսիայի գլխավոր գանձապետի՝ Ջոն Լոյի ոչ ճշգրիտ գործողությունների արդյունքում: Ֆրանսիայի պետական պարտքի հսկայական չափերի հետ կապված հիմնախնդիրը լուծելու նպատակով՝ նա գործի դրեց փողի տպագրիչ մեքենան, և արդյունքում՝ հսկայական արժեզրկված փողերի զանգվածը հանգեցրեց հիպերինֆլյացիայի և ֆինանսական ճգնաժամի:

Մեկ այլ ճգնաժամ ևս տեղ էր գտել նույն Ֆրանսիայում՝ 1788-1792թթ., երբ արդյունաբերական ապրանքների արտադրված ծավալները մեծապես գերազանցում էին ազգաբնակչության վճարունակ պահանջարկը: Արդյունքում, արտադրողների մոտ չիրացված ապրանքների զգալի պաշարներ էին կուտակվել, մասնավորապես, հացահատիկի մասով՝ նույնիսկ մի քանի տարվա: Սա հանգեցրեց նրան, որ ձեռնարկատերերը կտրուկ կրճատեցին արտադրության ծավալները, ինչը, բնականաբար, գործազրկության հսկայական ալիք բարձրացրեց: Սա մեծ հարված էր բնակչության կենսամակարդակին, և հիմնավոր կարծիք կա, որ հենց այս տնտեսական ճգնաժամը նպաստեց Ֆրանսիական մեծ հեղափոխությանը:

Խոշոր ճգնաժամ է եղել 1825 թվականին Անգլիայում, որը մասամբ անդրադարձել է նաև այլ

¹ <http://news.tut.by/world/122863.html>

երկրների տնտեսությունների վրա¹: Այս ճգնաժամը կարելի է համարել նաև որպես առաջին ֆինանսատնտեսական ճգնաժամ: Վերջինիս առաջացման նախապայման հանդիսացավ այն հանգամանքը, որ անգլիացի բազմաթիվ ներդրողներ մեծածավալ ներդրումներ էին կատարում լատինաամերիկյան երկրներում շահագործվող թանկարժեք մետաղների հանքավայրերում և դրա արդյունքում ստացված թանկարժեք մետաղները իրացվում էին Լոնդոնի ֆոնդային բորսայում: Այս գործընթացն ուղեկցվում էր նաև ապրանքների արտահանման զգալի չափերով: Սակայն, ժամանակի ընթացքում այստեղ առաջ եկան բազմաթիվ սպեկուլյատիվ տենդենցներ: Առևտրային հաշվեկշռի անհավասարակշռությունը, ինչպես նաև Անգլիայի բանկի ոսկու պաշարների կրճատումը հանգեցրեց նրան, որ 1825 թվականին վերջինիս կողմից բարձրացվեց զեղչման տոկոսադրույքը: Սրան հաջորդեց ֆոնդային շուկայի խուճապը և ֆինանսական ճգնաժամը, որն արագորեն տարածվեց մայրցամաքային երկրներ, մասնավորապես, Ֆրանսիա: Այս ֆինանսատնտեսական ճգնաժամը տարածվեց նաև դեպի Ամերիկյան մայրցամաք՝ Լատինաամերիկյան երկրներ և ԱՄՆ:

1836-1838թթ. ճգնաժամը նույնպես անգլիական ծագում ուներ: Այն առաջացել էր, հիմնականում, Անգլիայից կապիտալի արտահոսքի և այդ երկրի միջազգային ոսկու ռեզերվների նվազման պատճառով: Որպես արձագանք նշված իրավիճակին, 1836 թվականին Անգլիայի բանկը բարձրացրեց զեղչման տոկոսադրույքը: Արդյունքում՝ դեպի ԱՄՆ կապիտալի արտահոսքը նվազեց, սակայն, կազմալուծվեց ֆոնդային շուկան: Վերջինիս բացասական հետևանքները տարածվեցին նաև դեպի Ֆրանսիա: ԱՄՆ-ը ֆինանսական ռեսուրսների խիստ կրճատման արդյունքում մեծ տնտեսական դժվարությունների առաջ կանգնեց: Այստեղ սկսվեց բանկային խուճապ, որը հանգեցրեց վճարահաշվարկային ողջ համակարգի կազմալուծման:

1857 թվականի ճգնաժամը ևս իր բնույթով միջազգային էր և ուժեղ հարված հասցրեց այդ ժամանակաշրջանի զարգացած երկրների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի տնտեսություններին: Այս ճգնաժամը սկիզբ առավ ԱՄՆ-ում և արդյունք էր, հիմնականում, երկաթուղային ընկերությունների սնանկացման և դրանց բաժնետոմսերի ֆոնդային շուկայի փլուզման: Սա, իր հերթին, ուժեղ հարված հասցրեց ամերիկյան բանկային համակարգին, որը թղթակցային հաշիվների միջոցով, սկզբնական շրջանում, տարածվեց դեպի Անգլիա, իսկ այնուհետև, նաև եվրոպական մայրցամաք: Այս ճգնաժամն այնքան հզոր էր, որ դրա ալիքները տարածվեցին նաև լատինաամերիկյան երկրներ: Այս ճգնաժամի արդյունքում հիշյալ երկրներում խիստ կրճատվեց արդյունաբերության ծավալները: Մասնավորապես, ԱՄՆ-ում պողպատի արտադրությունը կրճատվեց 20%-ով, բամբակի արտադրությունը՝ 27%-ով, Անգլիայում նավաշինության արտադրության ծավալները կրճատվեցին 26%-ով, Գերմանիայում շուրջ 25%-ով կրճատվեց պողպատի սպառումը և այլն:

1873-1878 թվականների խոշոր միջազգային ֆինանսական ճգնաժամը սկիզբ առավ Ավստրիայում և Գերմանիայում: Սա արդյունք էր Անգլիայից սնվող լատինաամերիկյան երկրներում վարկային շուկայի գերակտիվացման, ինչպես նաև Գերմանիայի և Ավստրիայի անշարժ գույքի շուկաների սպեկուլյատիվ գերտաքացման: Արդյունքում, 1873 թվականի մայիս ամսին փլուզվեց Վիեննայի ֆոնդային բորսան, իսկ հետագայում նաև՝ Ցյուրիխի և Լմստերդամի ֆոնդային շուկաները: Գերմանիայի բանկերի կողմից տրամադրված վարկերի երկարաձգումների դիմումները մերժելու պատճառով ճգնաժամի ալիքը Գերմանիայից մեծ թափով տեղափոխվեց ամերիկյան մայրցամաք: ԱՄՆ-ում բանկային խուճապը արագորեն տարածվեց հատկապես «Միավորված խաղաղօվկիանոսյան երկաթգծեր» ընկերության նախագահ Ջեյ Կուկի սնանկացման և բաժնետոմսերի գների խիստ անկման պատճառով: Մեծապես տուժեցին նաև լատինաամերիկյան երկրների տնտեսությունները, որոնց արտահանման ծավալները զգալի նվազեցին, և դրա հետևանքով կրճատվեցին նաև պետական բյուջեի համապատասխան մուտքերը: Այս ճգնաժամը բավականին ծանր ու երկարաշունչ էր և ավարտվեց միայն 1878 թվականին:

1893 թվականին սկիզբ առած ճգնաժամը միջազգային ապրանքային շուկաների կրճատման արդյունք էր և դրա ազդեցությունը, հիմնականում, տարածվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների և

¹ Гринин Л. Е. Об истории экономических кризисов // Глобальный кризис как кризис перепроизводства денег. Философия и общество. № 1, 2009, С. 5.

Ավստրալիայի տնտեսությունների վրա: ԱՄՆ-ում, մասնավորապես, փողի առաջարկի կրճատման և ֆոնդային շուկայի կազմալուծման արդյունքում բանկային ճգնաժամ առաջացավ և տեղի ունեցավ կապիտալի զգալի արտահոսք: Ավստրալիայում՝ ճգնաժամի հիմնական պատճառը արտահանվող ապրանքների գների կտրուկ նվազումն էր, ինչպես նաև արտասահմանյան դեպոզիտների (հիմնականում՝ անգլիական) զանգվածային արտահոսքը:

Հարկ է նշել, որ եթե մինչև 20-րդ դարը տնտեսական ճգնաժամերը սահմանափակվում էին մեկ կամ մի քանի երկրների աշխարհագրական սահմաններով, ապա արդեն 20-րդ դարում դրանք ձեռք բերեցին, հիմնականում, համաշխարհային բնույթ՝ կապված երկրների տնտեսությունների մեծ քափով գլոբալիզացիայի հետ:

20-րդ դարի առաջին՝ 1907 թվականին տեղ գտած ճգնաժամը թերևս ամենածանրն էր ու տարածքային ընդգրկվածության մասշտաբներով ամենամեծը՝ Ոսկու ստանդարտի ժամանակահատվածի համար: Այս ճգնաժամը միջազգային բնույթ ուներ և տարածվել էր շուրջ 9 երկրներում: Վերջինիս սկզբնապատճառը հանդիսացավ Անգլիայի բանկի վարած կոշտ դրամավարկային քաղաքականությունը, մասնավորապես, զեղչման տոկոսադրույքնի կտրուկ բարձրացումը 1906 թվականին՝ 3.5-ից ընդհուպ մինչև 6 տոկոս: Սրա նպատակը, հիմնականում, Անգլիայի ոսկու ռեզերվների համալրումն էր: Սա հանգեցրեց ԱՄՆ-ից կապիտալի զգալի արտահոսքի, ինչը, իր հերթին, առաջացրեց Նյու Յորքի ֆոնդային շուկայի փլուզման: Փողի զանգվածի կրճատումը առևտրային ընկերությունների, ինչպես նաև ազգաբնակչության շրջանում բերեց վճարունակության մեծ հիմնախնդիրների և վճարահաշվարկային համակարգի կազմալուծման: Ճգնաժամի արդյունքում՝ Անգլիայի, ԱՄՆ-ի, իսկ հետագայում նաև Ֆրանսիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների տնտեսություններ հայտնվեցին երկարատև ռեցեսիոն փուլի մեջ:

1914 թվականին Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես խոշոր ֆինանսական ճգնաժամ բռնկվեց զարգացած կապիտալիստական երկրներում՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և Գերմանիա, և սա բնական էր, քանի որ այս երկրների կառավարությունները զինված ուժերի ֆինանսավորման առաջնահերթ խնդիրներ ունեին: Արդյունքում, նշված կառավարությունների կողմից համատարած կերպով վաճառվեցին օտարերկրյա թողարկողների արժեթղթերը: Սա, տրամաբանորեն հանգեցրեց ինչպես ֆինանսական, այնպես էլ ապրանքային շուկաների փլուզման և մեծ խուճապի: Սա մի յուրօրինակ ճգնաժամ էր իր բնույթով, քանի որ առաջացավ միաժամանակ մի քանի պետություններում:

1920-1922 թթ. ճգնաժամը, հիմնականում, կապված էր հետպատերազմյան շրջանում ազգային արժույթների արժևորման և արտադրության անկման հետ: Միաժամանակ, բանկային և արժույթային ճգնաժամեր առաջացան կապիտալիստական մի շարք երկրներում, մասնավորապես, ԱՄՆ-ում, Անգլիայում, Դանիայում, Նորվեգիայում, Ֆինլանդիայում, Իտալիայում, Հոլանդիայում և այլն: Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա նշված նույն ժամանակահատվածում՝ այս երկրում, ընդհակառակը, ճգնաժամը կապված էր հիպերինֆլյացիայի, պատերազմից հետո տնտեսական ծանր կացության և ազգաբնակչության սոցիալական ծանր վիճակի հետ:

1929-1933թթ. բռնկվեց թերևս 20-րդ դարի, ինչպես նաև կապիտալիստական ժամանակաշրջանի ամենամեծ և ամենաաղետալի ճգնաժամը: 1929 թվականի հոկտեմբերի 24-ին, որը պատմության մեջ մնաց որպես «Սև հինգշաբթի», Նյույորքյան ֆոնդային բորսայում տեղի ունեցավ արժեթղթերի փոխարժեքների կտրուկ անկում՝ ընդհուպ մինչև 70%-ով: Սա մեծ խուճապ առաջացրեց և հանգեցրեց ակտիվների գնի էլ ավելի զգալի արժեզրկման: Մեկ շաբաթվա ընթացքում արժեթղթերի սեփականատերերի կրած վնասները կազմում էին շուրջ 15 մլրդ դոլար: Սկսվեց սնանկացումների մի երկար շղթա, փակվեցին խոշոր ֆինանսական և արտադրական ընկերություններ, գործազրկության մակարդակը հասավ աննախադեպ չափերի: Ճգնաժամն արագ կերպով տարածվեց զարգացած կապիտալիստական երկրներում, որտեղ նույնպես առաջացան մմանատիպ բացասական դրսևորումներ: Ճգնաժամի ընթացքում արդյունաբերական արտադրությունը կրճատվեց ԱՄՆ-ում շուրջ 46%-ով, Մեծ Բրիտանիայում՝ 24%-ով, Ֆրանսիայում՝ 32%-ով, Գերմանիայում՝ 41%-ով: Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 1933 թվականի դրությամբ զարգացած 32 կապիտալիստական երկրներում գործազուրկ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակը կազմում

էր շուրջ 30 մլն մարդ: Ծգնաժամի բացասական ազդեցությունները դրսևորվում էին ընդհուպ մինչև 1933 թվականը, սակայն, մինչև 1930-ական թվականների ավարտը դրա ազդեցությունները դեռ զգացնել էին տալիս:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին ճգնաժամը տեղ գտավ 1957 թվականին: Այն ընդգրկեց զարգացած կապիտալիստական երկրները՝ ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Նիդեռլանդներ և այլն: Այս ճգնաժամը տևեց շուրջ մեկ և կես տարի, և այդ ընթացքում արդյունաբերական արտադրության ծավալները նշված երկրներում կրճատվեցին մոտ 4%-ով, իսկ գործազուրկների թիվը՝ 10 մլն: Հաջորդ խոշոր ճգնաժամը տեղ գտավ ԱՄՆ-ում՝ 1973 թվականին: Համեմատած նախորդի հետ այն ավելի խորն էր և ավերիչ: Որոշ ցուցանիշների մասով այս ճգնաժամը մոտեցավ «Մեծ դեպրեսիային»: Մասնավորապես, այս ճգնաժամի արդյունքում ԱՄՆ-ում արդյունաբերական արտադրությունը կրճատվեց 13%-ով, Գերմանիայում՝ 22%-ով, Ճապոնիայում՝ 20%-ով, Անգլիայում՝ 10%-ով, Ֆրանսիայում՝ 13%-ով, Իտալիայում՝ 14%-ով: Ֆինանսական շուկաները ևս անմասն չմնացին այս ճգնաժամից, մասնավորապես, միայն մեկ տարում՝ 1973-1974թթ, բաժնետոմսերի գները զգալի անկում ապրեցին. ԱՄՆ-ում՝ 33%-ով, Անգլիայում՝ 56%-ով, Ֆրանսիայում՝ 33%-ով, Իտալիայում՝ 28%-ով, Ճապոնիայում՝ 17%-ով, Գերմանիայում՝ 10%-ով: Սնանկացող ընկերությունների թիվը 1973 թվականի համեմատ 1974 թվականին զգալի աճեց: Մասնավորապես, Անգլիայում այդ աճը կազմեց ընդհուպ մինչև 47%, Ճապոնիայում՝ 42% և Գերմանիայում՝ 40%: Զարգացած մյուս կապիտալիստական երկրներում այս ցուցանիշը փոքր-ինչ ավելի մխիթարիչ էր, մասնավորապես, ԱՄՆ-ում այս ցուցանիշը ընդամենը 6% էր կազմում: Գործազուրկների թվաքանակը նույնպես զգալի աճեց այս ճգնաժամի արդյունքում: 1975 թվականին գործազուրկների ընդհանուր թիվը զարգացած կապիտալիստական երկրներում կազմեց շուրջ 15 մլն մարդ, իսկ մոտ 10 միլիոն մարդ տեղափոխվեցին ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատանքի կամ ժամանակավորապես ազատվեցին աշխատանքից: Հարկ է նշել, որ 1973 թվականին սկիզբ առավ նաև առաջին խոշորագույն էներգետիկ ճգնաժամը՝ կապված միջազգային շուկայում գնի բարձրացման նպատակով նավթարդյունահանող երկրների կողմից նավթի արդյունահանման ծավալները կտրուկ նվազեցնելու հետ: Այսպես, եթե 1973 թվականի ընթացքում միայն նավթի մեկ բառեղի գինը 3 ԱՄՆ դոլարից բարձրացավ մինչև 5 ԱՄՆ դոլար, իսկ արդեն 1974 թվականին՝ այդ գինը հասավ 12 ԱՄՆ դոլարի:

1987 թվականին համաշխարհային տնտեսության մեջ ևս մի տնտեսական ցնցում արձանագրվեց, երբ հոկտեմբերի 19-ին ամերիկյան «Dow Jones Industrial» ֆոնդային ինդեքսի ավելի քան 22%-անոց անկում գրանցվեց: Այս օրը պատմության մեջ մնաց որպես «Սև երկուշաբթի»: Ամերիկյան ֆոնդային շուկայի փլուզումը չէր կարող չազդել այլ տարածաշրջանների ֆինանսական շուկաների վրա: Եվ այդպես էլ եղավ: Հաջորդեցին Կանադայի, Հոնգկոնգի և Ավստրալիայի ֆոնդային շուկաների փլուզումները: Այս ճգնաժամը մասնագետները կապում էին, հիմնականում, մի քանի խոշոր ընկերությունների կապիտալիզացիայի կտրուկ նվազման հետևանքով ներդրողների արտահոսքի հետ:

1994-1995թթ. տեղ գտավ, այսպես կոչված, «Մեքսիկական ճգնաժամը»: Մեքսիկայի կառավարությունը դեռևս 1980-ական թվականների երկրորդ կեսերից իրականացնում էր արտասահմանյան կապիտալի ներգրավման հետևողական քաղաքականություն: Բազմաթիվ պետական ընկերությունների բաժնետոմսեր սկսեցին շրջանառվել ֆոնդային բորսայում, որի արդյունքում սկսած 1989 թվականից՝ օտարերկրյա կապիտալի մեծ հոսք սկսվեց դեպի Մեքսիկա: Սակայն, արդեն 1994 թվականին՝ ֆինանսական շուկայի գերհագեցվածության պատճառով, շատ ներդրողներ սկսեցին իրենց կապիտալն արտահանել Մեքսիկայից, որի արդյունքում մեծ խուճապ ու բանկային ճգնաժամ սկսվեց: Միայն 1995 թ. դրությամբ Մեքսիկայից շուրջ 10 մլրդ ԱՄՆ դոլարի կապիտալ արտահանվեց:

1997 թվականին Ասիական տարածաշրջանում արձանագրվեց ֆինանսական շուկայի փլուզում: Սա արդյունք էր Հարավարևելյան Ասիայի երկրներից կապիտալի զգալի արտահոսքի՝ կապված այդ երկրների արժույթների դալվազիայի հետ: Այս ճգնաժամը, թերևս այս տարածաշրջանի համար ամենախոշորն էր՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Ըստ հաշվարկների՝ Ասիական ճգնաժամի արդյունքում համաշխարհային ՀՆԱ-ն կրճատվեց շուրջ 2

տրիլիոն ԱՄՆ դոլարի չափով:

1998 թվականին սկիզբ առավ, այսպես կոչված, «Ռուսական ճգնաժամը», որը մեծ հարված հասցրեց այդ պետության տնտեսությանը: Այս ճգնաժամը արդյունք էր Ռուսաստանի պետական մեծ պարտքի, միջազգային շուկաներում հումքի գների անկման, իսկ Ռուսաստանը հանդիսանում էր և ներկայումս էլ մնում է նավթի և գազի խոշոր արտահանող: Պետական պարտքի չափերը հասան ահռելի չափերի: Փլուզվեց ռուսական ՊԿՊ-ների մինչ այդ մեծ պահանջարկ վայելող շուկայի հսկայական բուրգը, որին հաջորդեց դեֆոլտը: 1998 թվականի օգոստոսից մինչև 1999 թվականի հունվար ամիսն ընկած ժամանակահատվածում՝ ռուսական ռուբլու փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ նվազեց 3 անգամ՝ 6 ռուբլուց հասնելով մինչև 21 ռուբլու՝ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց¹:

Այժմ անդրադառնանք 2007 թվականին սկիզբ առած և մինչ օրս դեռևս ամբողջությամբ չհաղթահարված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին և նրա հիմքում ընկած խորքային պատճառներին: Տնտեսագետները և վերլուծաբանները նշում են վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի մի շարք պատճառներ, մասնավորապես.

- տնտեսության պարբերաշրջանայնությունը,
- վարկային և հատկապես հիփոթեքային շուկաների գերակտիվացումը,
- հումքի բավական բարձր գները,
- անարդյունավետ ֆինանսական կարգավորման մեթոդների կիրառությունը տարբեր երկրներում²:

Նշված պատճառները ավելի ընդհանրական են, քանի որ դրանցից բոլորը կամ մի մասը վերաբերում են, սովորաբար, համարյա բոլոր ճգնաժամային զարգացումներին: Ինչ վերաբերում է այս ճգնաժամին, ապա հարկ է նշել, որ այն ուներ որոշակի յուրահատկություններ, որը առիթ է տալիս եզրահանգելու, որ այս ճգնաժամը մեծան չէր նախկինում տեղ գտածներին: Այդ յուրահատկություններից հարկ է նշել, մասնավորապես, նախ և առաջ այն, որ այս ճգնաժամը իր խորությամբ և տարածքային ընդգրկվածությամբ թերևս ամենաառաջինն է համաշխարհային բոլոր տեմպերով աճող գլոբալիզացիոն գործընթացների արդի փուլում: Սրա հիմնական պատճառներն են տեղեկատվական տեխնոլոգիաների, ֆինանսական շուկաների և նոր ֆինանսական գործիքների արագ զարգացումն ու աննախադեպ աճը, ինչպես նաև կապիտալի միջազգային հոսքերի ավելի ազատականացումը: Համաշխարհային տնտեսության մեջ առևտրային և ֆինանսական հոսքերի անհամաչափություններն ավելի ցայտուն դրսևորումներ ձեռք բերեցին:

Երկրորդ կարևոր ուշագրավ առանձնահատկությունը կապված է զարգացած համարյա բոլոր երկրներում համախառն պահանջարկի ագրեսիվ խթանման քաղաքականության կիրառման հետ, ինչն ուղեկցվել է վակային ազատական և ընդլայնողական քաղաքականությամբ: Նշենք նաև, որ ֆինանսական նոր սպեկուլյատիվ գործիքների ներմուծումն ու արագ տարածումը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների արժեթղթավորման լայն տարածումը գտած գործընթացները զանազան ֆինանսական բուրգերի ստեղծման օբյեկտիվ նախապայմաններ հանդիսացան: Սակայն, վերջիններս վաղ թե ուշ փլուզվելու էին և հանգեցնելու էին ֆինանսական համակարգի «կոլլապսի», ինչին և ականատես եղանք ճգնաժամի սկզբնական շրջանում ամերիկյան հիփոթեքային պարտատոմսերի շուկայում, իսկ այնուհետև՝ նաև ողջ համաշխարհային ֆինանսական շուկայում: Երրորդ հերթին, այս ճգնաժամը հանդես եկավ որպես համաշխարհային տնտեսության մեջ շուկայական գործընթացների ապահովասարակշռության և խեղաթյուրման առաջին խոշոր հետևանք: Սա ժամանակի ընթացքում կուտակված շուկայական մեխանիզմների ձևախեղման առաջին սուր դրսևորումն էր և կապված էր 20-րդ դարավերջից սկիզբ առած տեղեկատվական նոր տեխնոլոգիաների լայն թափով զարգացման և դրանց հիման վրա ստեղծված և մեծ տարածում գտած ֆինանսական ինովացիաների արագ տեմպերով ներդրման հետ: Վիրտուալ ֆինանսական ակտիվները դեպի իրենց էին գրավում մեծածավալ իրական դրամական միջոցներ, «խոստանալով» մի քանի անգամ ավելի բարձր շահութաբերություն, քան տնտեսության մեջ ներդրվելու դեպքում: Այս

¹ <http://www.assessor.ru/forum/index.php?t=788>

² Վ. Դարությունյան, Կ. Սարգսյան, Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառները և դրա ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, համրապետական գիտաժողովի նյութեր, Պրիք 1, Երևան, 2012.:

իրողության հետ է կապված մեծապես այն փաստը, որ վերջին ժամանակահատվածում ֆինանսական շուկաները զգալի և աննախադեպ չափերով աճել էին և բազմակի անգամ գերազանցում էին իրենց տարողունակությամբ ապրանքային շուկաներին, ինչը շուկայական համակարգի բնականոն գործունեության խեղաթյուրման վառ օրինակ է: Ինչ վերաբերում է վերջին ժամանակահատվածում համաշխարհային շուկայում տեղ գտած ակտիվների և արժույթի շարժի համընդհանուր ազատականացմանը, ապա դա, սկզբնական շրջանում, նպաստեց տնտեսական գործընթացների արդյունավետությանը, սակայն, հետագայում նաև՝ ճգնաժամի արագ և անխոչընդոտ տարածմանը:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ ճգնաժամը Եվրոպական Միության համար ունեցավ առանձնակի նշանակություն՝ կապված որոշ առանձնահատկությունների հետ: Առաջինը կապված է այս միության դերի փոփոխության հետ՝ աշխատանքի միջազգային բաժանման գործընթացում՝ դրանից բխող նրա մրցակցային դիրքերի թուլացմամբ: Մյուս առանձնահատկությունը կապված է ԵՄ տարածաշրջանային ընդլայնման հետ՝ դեպի արևելք: Արևելյան Եվրոպայի երկրների անցումային տնտեսությունները արդեն փաստացիորեն հանդիսանում են ԵՄ տնտեսական տարածության բաղկացուցիչ մաս, սակայն, ճգնաժամային ազդեցությունները անցումային տնտեսություններում արտահայտվում են այլ կերպ, քան զարգացած շուկայական տնտեսություններում, ինչն առաջացրեց այս տարածաշրջանի տնտեսության համար անհամաչափ շոկային ցնցումներ՝ պահանջելով լուրջ և հետևողական լուծումներ¹:

**Владимир Арутюнян
Карен Саргсян**

Анализ кризисов на разных стадиях развития мировой экономики

Аннотация

Экономические кризисы еще с давних времен сопутствуют социальному и экономическому развитию. Но постоянный и периодический характер они приобрели со времен становления капиталистических рыночных отношений. В данной статье исследованы экономические кризисы на разных стадиях развития мировой экономики и причины их возникновения.

**Vladimir Harutyunyan
Karen Sargsyan**

The analysis of crises during various stages of development of the global economy

Abstract

Economic crises come along with social and economic development over several centuries. However, permanent and periodical characteristics they obtain only since establishment of capitalistic market relations. The article investigates economic crises during various stages of development of world economy and reasons causing them as well.

¹ Буторина О.В. Антикризисная стратегия Европейского союза: ближние и дальние рубежи / О.В. Буторина // Политика. – 2009. – №3.